Հաշվետվություն

2024 թվականի հունիսի 19-ից 21-ը Շվեյցարիայի Համադաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Նանե Ղազարյան, Կադաստրի կոմիտեի իրավաբանական վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ժնև, հունիսի 19-ից 21-ը

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով փորձագետների եվրոպական տարածաշրջանային կոմիտե (UN-GGIM: Europe

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով փորձագետների եվրոպական տարածաշրջանային կոմիտեի 11-րդ լիագումար նիստին:

Մասնակցություն երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի և Եվրոպական վիճակագիրների համաժողովի (CES) 72-րդ համատեղ նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**

Նիստերի օրակարգն ընդգրկում էր հետևյալ հիմնական թեմաները.

- ✓ Փորձագետների կոմիտեի ընդհանուր ծրագրի և տարածաշրջանային կոմիտեի պաշտոնական գործունեությանը վերաբերող հարցեր,
- ✓ Երկրատարածական տվյալների և ծառայությունների կիրառման առանձնահատկությունները,
- ✓ Կոմիտեի գլոբալ ծրագրի իրականացման գործընթացում Եվրոպայի տարածաշրջանի ունեցած դերակատարությանն առնչվող հարցեր,
- ✓ Տվյալների ինտեգրման քաղաքականության մշակման առանձնահատկություններ,
- ✓ Գլոբալ գեոդեզիական ցանցի զարգացմանը վերաբերող հարցեր,

- ✓ Ինտեգրված աշխարհատարածական տեղեկատվական շրջանակի (IGIF) և Համաշխարհային վիճակագրական աշխարհատարածական շրջանակի (GSGF) մեխանիզմների կիրառումը,
- ✓ Կայուն զարգացման նպատակների իրականացման մարտահրավերներ,
- ✓ Երկրատարածական տվյալների դերը կլիմայական փոփոխություններին դիմակայելու, ազդեցությունները մեղմելու գործում,
- ✓ Երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով փորձագետների կոմիտեի շրջանակներում միջտարածաշրջանային համագործակցության խթանմանն առնչվող հարցեր,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հունիսի 19–ին կայացած Երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով ՄԱԿ-ի փորձագետների եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի լիագումար նիստի ընթացքում քննարկվեցին փորձագետների կոմիտեի ընդհանուր ծրագրի և տարածաշրջանային կոմիտեի պաշտոնական գործունեությանը վերաբերող հարցեր: Անդրադարձ կատարվեց առկա գլոբալ մարտահրավերների լուծման նպատակով երկրատարածական տվյալների և ծառայությունների կիրառմանը, ինչպես նաև տարածաշրջանային առաջնահերթությունների համատեքստում կոմիտեի գլոբալ ծրագրի իրականացման գործընթացում Եվրոպայի տարածաշրջանի ունեցած դերակատարությանն առնչվող հարցերին:

Հունիսի 20-ին տեղի ունեցած երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի և Եվրոպական վիճակագիրների համաժողովի (CES) 72-րդ համատեղ նստաշրջանի շրջանակներում շոշափվեցին վիճակագրական և երկրատարածական համայնքների համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող կարևորագույն թեմաներ: Ընդգծվեց նորագույն տեխնոլոգիաների ներդրման միջոցով տարածական տվյալների փոխկապակցման, ինտեգրման և փոխգործելիության ապահովման հնարավորությունների ընդլայնման կարևորությունը, մի շարք գործոնների՝ (կառավարում, տեխնոլոգիա, գործնական կիրառում, նորարարական մոտեցումներ և այլն) արդյունավետ կիրառման անհրաժեշտությունը: Ներկայացվեցին ՀՀ ում կադաստրային համակարգերի ինտեգրման, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման ուղղությամբ իրականացված միջոցառումները, ոլորտին առնչվող իրավական ակտերի մշակման և ընդունման առանձնահատկությունները:

Ներկայացրել եմ «Արհեստական բանականության կիրառումը որպես գործիք շինությունների բացահայտման նպատակով» վերնագրով շնորհանդեսը՝ ցուցադրելով և պարզաբանելով, թե ինչպես են մեքենայական ուսուցման, անշարժ

գույքի տեղեկատվական բազայի և օրթոլուսանկարների համեմատության միջոցով բացահայտվում տեղեկատվական բազայում չներառված գույքերը և որպես վերջնական արդյունք՝ ներառվում գույքահարկի բազայում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ներկայացվեցին փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի գործունեության զեկույցը, նախորդ նստաշրջանի ընթացքում թարմացված աշխատանքային ծրագրի իրականացման ընթացքը, գրանցված արդյունքները, նախանշվեցին առկա առաջնահերթությունների վրա հիմված հաջորդ տարիների գործունեության ուղղությունները, նշանակվեցին կոմիտեի գործադիր մարմնի նոր անդամները:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Նանե Ղազարյան 25.06.2024 թ.